ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԲԱՑՈՒՄԸ

ՎՐԱՑԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՊՐԵԶԻԴԵՆՏ, ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ն. Ի. ՄՈՒՍԽԵԼԻՇՎԻԼՈՒ ՃԱՌԸ

Ընկերնե՛ր.

Վրացական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիան մեր դելեգացիային և մասնավորապես ինձ հանձնարարել է Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիային նրա բացման օրը հաղորդել եղբայրական ընկերական ողջույն և Հայաստանի գիտնականներին ու ի դեմս նրանց հայ ամբողջ ժողովրդին հաղորդել ջերմագին շնորհավորանքներ:

Սեփական, լիարժեք, ուժեղ Գիտությունների Ակադեմիայի հիմնադրումը հսկայական կարևորություն ունեցող մի իրադարձություն է ամբողջ հայ ժողովրդի կյանքում, և վրացի ժողովուրդը, որ իր ակադեմիան հիմնել է մոտ 3 տարի առաջ, շատ լավ է հասկանում և անկեղծորեն մասնակից է ուրախության և ուրախության այն զգացմունքներին, որոնցով դուք, անշուշտ, ներկայումս համակված եք:

Իհարկե, այն մեծ, ինտենսիվ աշխատանքը, որ պետք է կատարի մեր Ակադեմիան, փաստորեն այսօր չի սկսվում, ինչպես և մեր Ակադեմիայի աշխատանքը փաստորեն սկսվեց ոչ սրանից 3 տարի առաջ: Մեր ակադեմիաների արմատները գնում են դեպի հեռավոր անցյալը, նրանք հենվում են մեր եղբայրական ժողովուրդների բազմադարյան մեծ կուլտուրայի վրա, որով մենք իրավացիորեն պարծենում ենք և որ մենք այնպես սիրում ենք:

Սովետական իշխանությունը մեր ժողովուրդներին օգնեց վերածնելու մեր այդ կուլտուրայից ամեն լավագույնը, մինչդեռ այլ պայմաններում այդ կուլտուրան կարող էր տառապյալորեն կորստի մատնվել:

Սովետական իշխանությունը մեզ օգնել է և օգնում է առաջ շարժվելու և չտեսնված ուժերով զարգացնելու մեր վերստեղծված կուլտուրան:

Սովետական իշխանության տարիներին հայ ժողովուրդը առաջ է քաշել գիտական աշխատողների ընդարձակ կադրեր, որոնց մեջ քիչ չեն համաշխարհային անուն ունեցող խոշորագույն գիտնականները: Ես բախտ ունեմ ծանոթ լինելու դրանցից շատերի հետ ինչպես անձամբ, այնպես և իրենց աշխատությունների միջոցով: Հիմնվելով այդ ծանոթության, ինչպես նաև այն բանի վրա, ինչ ես իմացել եմ զանազան ճյուղերի իմ ընկեր-մասնագետներից, ես կարող եմ լիակատար վստահությամբ պնդել, որ հայկական Գիտությունների Ակադեմիան կլինի մեր ուժեղագույն ակադեմիաներից մեկը, որ նա շատ փառավոր էջեր կգրի ինչպես իր ռեսպուբլիկայի, այնպես և ամբողջ Սովետական Միության կուլտուրայի պատմության մեջ և որ նա միշտ էլ կվայելի Հայաստանի և այլ եղբայրական ռեսպուբլիկաների աշխատավորական ժողովրդի հարգանքն ու սերը:

Այն փաստը, որ մեր Ակադեմիան հիմնված է՝ պատերազմի օրերին, երբ Սովետական Միության ժողովուրդների բորբ ուժերը միավորված են մի հսկայական ջանքի մեջ, որպեսզի վերջնականապես ջախջախեն ամբողջ մարդկության, ամբողջ կուլտուրայի թշնամիներին,— մի անգամ ևս վկայում է մեր մեծ Միության անխորտակելի հզորությունը և այն մեծագույն նշանակությունը, որ Սովետական իշխանությունը տալիս է մեր գիտության ու կուլտուրայի զարգացմանը:

Այդ կապակցությամբ ես անհրաժեշտ եմ համարում նշելու այն բացառիկ դերը, որ հայկական Ակադեմիայի հիմնադրման դրդ-

ծում խաղացին հայ ժողովրդի ղեկավարները և անձամբ Գրիգոր Արտեմովիչ Հարությունյանը, որը արժանավորապես վայելում է ինչպես հայ, այնպես և վրացի գիտնականների սերն ու հարգանքը (ծափահարություններ):

Ընկերնե՛ր, հայ և վրաց ժողովուրդների բախտը, նրանց պատմական ուղիները միշտ էլ սերտորեն միահյուսված են եղել: Այժմ մեր Միության ժողովուրդների մեծ բարեկամությունը այդ ուղիները միացրել է միանգամ ընդմիշտ: Հայ և վրաց ժողովուրդների լավագույն մարդիկ, մեր լավագույն գիտնականները միշտ էլ միմյանց վերաբերվել են խորին հարգանքով:

Հայ և վրաց սովետական գիտնականների միջև վաղուց հաստատվել է մի սերտ համագործակցություն, որին խթան է հանդիսանում մտավոր հաբեանության, կուլտուրաների ազգակցությունը, հետազոտության շատ օբյեկտների ընդհանրությունը, մեր ժողովուրդների բարեկամությունը:

Մենք պետք է ամեն կերպ ձգտենք ուժեղացնելու այդ կապը, ձգտենք այն բանին, որ մեր երկու երիտասարդ Ակադեմիաների աշխատանքը, ինչպես նաև ՍՍՌ Միության Գիտությունների Ակադեմիայի Ադրբեջանական Ֆիլիալի աշխատանքները սերտորեն համաձայնեցված լինեն մեկը մյուսին, որ մենք օգնենք միմյանց, սովորենք մեկս մյուսից:

Մեր այդ փոխադարձ սերտ կապը Ի՛ զվելի կամբայնդի մեր կապը ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի հետ, որը այնքան շատ բան է արել մեզ համար և որին մենք միշտ էլ շնորհակալ կլինենք:

Ընկերնե՛ր. այն բարձր գնահատականը, որ մեծ Ստալինն է տվել սովետական ինտելիգենցիայի դերին, մեզ շատ բանի է պարտավորեցնում: Մեզ հսկայական, բերկրալի աշխատանք է սպասում այն խնդիրները լուծելու գործում, որ մեր առաջ դնում է մեր Հայրենիքը, այն խնդիրները, որոնք վերաբերում են ինչպես պատերազմի, այնպես և հետպատերազմյան ժամանակին:

Այդ խնդիրները շատ-շատ են, նրանք երբեմն շատ դժվարին ու բարդ են: Բայց մենք էլ բավականաչափ ուժ ունենք, մանավանդ եթե միացնենք այդ ուժը ավելի սերտ կերպով, իսկ այդ մենք, իհարկե, ուզում ենք և կարող ենք անել:

Թող ապրի՛ ու զարգանա՛ Հայաստանի երիտասարդ ուժեղ Գիտությունների Ակադեմիան, կեցցե՛ն նրա առաջին 23 ակադեմիկոսները:

Կեցցե՛ հայկական և վրացական ակադեմիաների սերտ միասնությունը և համագործակցությունը:

Կեցցե՛ եղբայրական հայ ժողովուրդը:

Կեցցե՛ մեր մեծ առաջնորդ և մեր առաջավոր գիտության ղեկավար ընկեր Ստալինը (բուռն ծափահարություններ):